դատական ծախսերի փոխհատուցման հարցը լուծելիս դատարանը հիմք է ընդունում միայն գործում առկա փաստաթղթերով հիմնավորված ծախսերը։»։

ՔԴՕ 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն։

Անդրադառնալով սույն գործով հատուցման ենթակա դատական ծախսերին և հաշվի առնելով հայցի բավարարումը, Դատարանը գտնում է, որ դատական ծախսերը պետք է կրի Պատասխանող կողմը, հետևաբար Պատասխանողից հօգուտ Հայցվորի ենթակա է բռնագանձման 300000 ՀՀ դրամ նախապես վճարված պետական տուրքի գումարը։

<u>6. Հայցի ապահովման հարցի լուծումը.</u>

Դատարանը 06.11.2024թ. կայացրել է հայցի ապահովման միջոց կիրառելու Հայցվորի միջնորդությունը մասնակի բավարարելու մասին որոշում, այն է՝

- Արգելել ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը միակողմանի լուծել «ՏԿԵՆ-ՀԲՄԱԾՁԲ-2022/2Շ-1» ծածկագրով պայմանագիրը՝ մինչև սույն գործով վերջնական դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը։

- Արգելել «Արդշինբանկ» ՓԲԸ-ին վճարել «Արդշինբանկ» ՓԲԸ-ի կողմից «Լեոպոլդ և ընկերներ» ՍՊԸ-ին 20.09.2022թ. տրամադրված թիվ 652-8560 բանկային երաշխիքով նախա-տեսված գումարը՝ 64.627.366 (վաթսուն չորս միլիոն վեց հարյուր քսանյութ հազար երեք հարյուր վաթսունվեց) ՀՀ դրամը՝ մինչև սույն գործով վերջնական դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը։

Հաշվի առնելով հայցի ապահովման միջոցի կիրառումը մինչև դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելու հանգամանքով պայմանավորելը, Դատարանը գտնում է, որ դրանք ենթակա են վերացման վճիռն օրինական ուժի մեջ մտնելու պահից։

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենս-գրքի 188-189-րդ, 191-192-րդ, 198-րդ, 362-րդ հոդվածներով՝

Վ Ճ Ռ Ե Ց

1. «Լեոպոլդ և ընկերներ» ՍՊ ընկերության հայցը բավարարել. պարտավորեցնել ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը՝

1.1. համարել ընդունված «ՏԿԵՆ-ՀԲՄԱԾՁԲ-2022/2Ծ-1» ծածկագրով պայմանագրի շրջա-նակներում «Լեոպոլդ և ընկերներ» ՍՊԸ-ի կողմից 2022 թվականին իրականացված 642.427.793 (վեց հարյուր քառասուներկու միլիոն չորս հարյուր քսանյոթ հազար յոթ հարյուր իննսուներեք) ՀՀ դրամի կապալային աշխատանքները.

1.2. համամասնորեն նվազեցնել «ՏԿԵՆ-ՀԲՄԱԾՁԲ-2022/2Ծ-1» ծածկագրով պայմանա-գրով նախատեսված երաշխիքային սպասարկման ժամկետը, այն է՝ 2022 թվականին իրակա-նացված 642.427.793 (վեց հարյուր քառասուներկու միլիոն չորս հարյուր քսանյոթ հազար յոթ հարյուր իննսուներեք) ՀՀ դրամի կապալային աշխատանքների համար ՏԿԵՆ-ՀԲՄԱԾՁԲ-2022/2Ծ-1» ծածկագրով պայմանագրի 3.4.8 և 3.4.9 կետերով նախատեսված երաշխիքային ժամկետի սկիզբը հաշվարկել 2022թ. դեկտեմբերի 19-ից.

1.3. «ՏԿԵՆ-ՀԲՄԱԾՁԲ-2022/2Ծ-1» ծածկագրով պայմանագրի ապահովում սահմանել բացառապես 2024 թվականին իրականացման ենթակա 33.701.169 (երեսուներեք միլիոն յոթ հարյուր մեկ հազար մեկ հարյուր վաթսունինը) ՀՀ դրամի աշխատանքների համար:

2. ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունից հօգուտ «Լեոպոլդ և ընկերներ» ՍՊԸ-ի որպես դատական ծախս բռնագանձել 300000 (երեք հարյուր հազար) ՀՀ դրամ նախապես վճարված պետական տուրքի գումարը: Դատական ծախսերի բաշխման հարցը համարել լուծված:

3. Դատարանը 06.11.2024թ. որոշմամբ կիրառված հայցի ապահովման միջոցները՝ «1.Արգելել ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը միակողմանի լուծել «ՏԿԵՆ-ՀԲՄԱԾՁԲ-2022/2Ծ-1» ծածկագրով պայմանագիրը՝ մինչև սույն գործով վերջնական դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը: 2. Արգելել «Արդշինբանկ» ՓԲԸ-ին վճարել «Արդշինբանկ» ՓԲԸ-ի կողմից «Լեոպոլդ և ընկերներ» ՍՊԸ-ին 20.09.2022թ. տրամադրված թիվ 652-8560 բանկային երաշխիքով նախատեսված գումարը՝ 64.627.366 (վաթսուն չորս միլիոն վեց հարյուր քսանյութ հազար երեք հարյուր վաթսունվեց) ՀՀ դրամը՝ մինչև սույն գործով վերջնական դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը:» պահպանել մինչև վճիռն օրինական ուժի մեջ մտնելը, այդ պահից համարել վերացված:

4. Վճիռը կամովին չկատարելու դեպքում այն կկատարվի Հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին:

5. Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակվելու օրվա-նից մեկամսյա ժամկետում:

Դատավոր՝ **Դանիել Միսեյան**

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am